ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 սեպտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

127
(2793)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՔՊ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ



ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը եւ նրա ընկեր, արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը քաղաքական հաշվեհարդար են տեսնում դատավորների հետ: ՔՊ-ի հետ չհամագործակցելու համար քաղաքապետի թեկնածուներից մեկի փեսային փաստացի ստիպել են ազատման դիմում գրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օրերս Կարեն Անդրեասյանը եւ Գրիգոր Մինասյանը փաստացի (ճնշման տարբեր օղակներ գործի դնելով) ստիպել են Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ներսիսյանին, որպեսզի աշխատանքից ազատման դիմում գրի կամավոր: Պատճառը Երեւանի ավագանու ընտրությունների մասնակից, «Հաղթանակ» կուսակցության քաղաքապետի թեկնածու Վիկտոր Մնացականյանն է: Պարզվում է՝ այս ընթացքում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը տարբեր օղակներով փորձում է հնարավոր թեկնածուների հետ հանդիպել, խոստումներ ստանալ, թե ընտրություններից հետո արդյոք պատրաստվում են ՔՊ-ի հետ կոալիցիա-դաշինք ձեւավորել եւ քաղաքապետ ընտրել ՔՊ թեկնածուին: Վիկտոր Մնացականյանը քանի որ կտրուկ մեժել է համագործակցությունը ՔՊ-ի հետ, նրա փեսային՝ դատավոր Ռուբեն Ներսիսյանին, ստիպել են ԲԴԽ-ից ազատման դիմում գրել հեռանալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դատավորի ազատման դիմումն արդեն ԲԴԽ-ում է: Իհարկե, փորձեցինք այս տեղեկությունը ճշտել երկու կողմերից. դատավոր Ռուբեն Ներսիսյանը երեկ ողջ օրն այդպես էլ չպատասխանեց մեր հեռախոսազանգերին, իսկ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանն իր խոսնակի միջոցով փոխանցեց. «Բացառիկ հորինվածքներն ու բամբասանքները զվարճալի կլինի մեկնաբանել»:

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, որ բակ առ բակ ընկած քարոզչություն է իրականացնում՝ հավակնելով կրկին դառնալ համայն հայության մայրաքաղաքի ղեկավարը, թերեւս մոռացել է իր աշխատանքը: «Ժողովուրդ» օրաթերթը շատ է գրել այն մասին, որ Հայկ Մարությանն ամենաանպատասխանատու քաղաքապետերից է եղել, քանի որ ամենաշատն է բացակայել աշխատանքից, արձակուրդում ամենաշատը եղած պաշտոնյան է եղել: Իհարկե, Կորոնավարակի օրերին հեռավար աշխատանքը դարձել էր սովորական երեւույթ, բայց Մարությանը մինչ այդ վարակը եւ դրանից հետո շատ հաճախ է հեռակառավարել կամ բարձիթողի վիճակում թողել քաղաքապետարանը: Հայկ Մարությանը պարբերաբար եղել է Չեխիայում: Եւ դեռ այդ օրերին քաղաքապետարանի աշխատակիցները դժգոհում էին, որ որեւէ թուղթ ստորագրելու համար օրերով հերթագրվում են քաղաքապետի մոտ ընդունելության: Հիմա, կարծես թե, Հայկ Մարությանի հավեսը տեղն է եկել, նորից ուզում է քաղաքապետ դառնալ, սակայն պարզ չէ, թե քանի օր նա նույն ինտենսիվությամբ աշխատանքի կգնա:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Պետական պահպանության ծառայության պետ Սարգիս Հովհաննիսյանի ազատումը բավականին խորը արմատներ ունի: Սարգիս Հովհաննիսյանի աշխատանքից Նիկոլ Փաշինյանը տեւական ժամանակ դժգոհություններ է ունեցել, եւ ներքին քննարկում է եղել նրան փոխարինող գտնելու վերաբերյալ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը կասկածներ է ունեցել , որ Հովհաննիսյանի կողմից իր ընտանիքի, կնոջ մասով արտահոսք է եղել, որից հետո որոշել են կոնկրետ քայլերի գնալ: Մասնավորապես, Աննա Հակոբյանի անվտանգության պետ Արթուր Գասպարյանը սկսել է ակտիվանալ ՊՊԾ-ում, ու Հովհաննիսյանի շուրջ օղակը սկսել է սեղմվել: ՊՊԾ-ում մթնոլորտը թեժացել է, եւ Սարգիս Հովհաննիսյանին աշխատանքից ազատելու պահը հասունացել է սեպտեմբերի 9-ին՝ «Դվին մյուզիք հոլ»-ի բակում հնչած հրավառության պայթյուններից հետո: Ըստ լուրերի՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւս վախեցել է հրավառության պայթյունի նմանվող ձայներից, քանի որ «Դվին»-ը գտնվում է կառավարական ամառանոցի հարեւանությամբ: Երբ Նիկոլ Փաշինյանն իր անմիջական անվտանգության պատասխանատու Սարգիս Հովհաննիսյանից հետաքրքրվել է, թե ինչ ձայներ են, ով է հրավառության կազմակերպիչը, արդյոք ունի թույլտվություն, թե ոչ, Սարգիս Հովհաննիսյանը զեկուցել է, որ թույլտվություն ունեցել է ախալքալաքցի էդգարը, որը հարսանիքի առիթով պատվիրել է թանկարժեք հրավառությունը: Երբ ՀՀ ոստիկանապետից Նիկոլ Փաշինյանը բարկացած հետաքրքրվել է, թե ով է թույլ տվել այդ ժամին նման հրավառություն կազմակերպել, զեկուցվել է, թե թույլտվություն չեն ունեցել կազմակերպիչները, ինչի համար ՀՀ ներքին գործերի նախարարությունը «Գոլդ Ֆայեր» ՍՊԸ ընկերությանը տուգանել է 100 հազար դրամով: Ստացվում է, որ Սարգիս Հովհաննիսյանը խաբել է Նիկոլ Փաշինյանին: Իրականում «Դվին» հյուրանոցի թիկնապահը զանգահարել եւ հրավառության համար բանավոր թույլտվություն ստացել է ՊՊԾ-ից: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 9-ին, վարչապետ Փաշինյանի որոշմամբ, Սարգիս Հովհաննիսյանը գիշերով ազատվել է ՀՀ պետական պահպանության ծառայության պետի պաշտոնից: Գեներալ-մայորն այդ պաշտոնում նշանակվել էր մոտ չորս ամիս առաջ՝ ապրիլին: Մինչ այդ՝ 2020 թվականի դեկտեմբերից, Սարգիս Հովհաննիսյանը ԱԱԾ պետական պահպանության ծառայության պետն էր: Հավելենք, որ իրավապահ համակարգում ակտիվ քննարկվում է, որ Սարգիս Հովհաննիսյանին առանց պաշտոն չեն թողնի, քանի որ նա ահռելի ծավալի տեղեկության է տիրապետում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող Քրեակատարողական ծառայության պետերին արդեն գործադիրից հասկացրել են, որ Քրեակատարողական ծառայության նոր պետ նշանակելուց հետո բանտապետերի փոփոխություններ էլ են լինելու, հետեւաբար պետք է պատրաստ լինել հնարավոր ազատումներին կամ տեղափոխություններին: Ասել է թե՝ գրեթե բոլոր բանտապետերի գլխին սեւ ամպեր են կուտակվել: Իսկ թե երբ կնշանակվի ՔԿ ծառայության ղեկավար, եւ ով կնշանակվի, մեծ հարց է, քանի որ համապատասխան կադր դեռ չի գտել Նիկոլ Փաշինյանը:

ԶՐՈՒՅՑ

ՀՐԱՉ ՀԱԿՈԲՅԱՆԸ՝ ԸՆՏՐԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիտորդ մարմինները դարբերաբար ահազանգեր են հնչեցնում, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ ավագանու ընտրությունների քարոզարշավը վարչական մեծ ռեսուրսի կիրառմամբ եւ բազմաթիվ խախտումներով է ընթանում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչ Հակոբյանը պնդում է, թե բացառում են խախտումները, իսկ նրանք, ովքեր քարոզարշավին «մարդ բերելու» հրահանգ կստանան, թող դիմեն ՔՊ-ի նախընտրական շտաբ:

-Այդ ամենը մեկնաբանել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական շտաբը, հորդորել են բոլոր այն քաղաքացիներին, որոնք նման հրահանգ կամ ուղղորդվածություն կստանան, դիմեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբին: Մենք բացառում ենք, չեն ընդունում, մերժում ենք նման դեպքերը: Մեզ համար անընդունելի է նման գործելաոճը՝ մարդկանց բերել հանրահավաքների, նրանց դրդել ինչ-որ բան անել եւ այլն:

-Չնայած նախընտրական շտաբը հերքում է, սակայն համացանցում տարածվում են տեղեկություններ, որ մի քանի օր առաջ մանկապարտեզի տնօրենը հարձակվել էր դիտորդի վրա, նրա բեյջը խլել էր եւ այլն, այսինքն՝ նման դեպքեր, այնուամենայնիվ, լինում են: Սա ի՞նչ է այդ դեպքում:

-Նման արարքները, առհասարակ, դատապարտելի են, որեւէ մեկի հանդեպ կատարված ոտնձգությունը, իհարկե, դատապարտելի է. դա չի քննարկվում: Իսկ Ձեր նախորդ հարցի հետ կապված՝ կարող եմ ասել, որ, բնականաբար, չեմ բացառում, որ տեղի ունեցած լինի «արջի ծառայության» մատուցում: Հնարավոր է, որ լինեն այնպիսի մարդիկ, որ փորձեն իրենց նախաձեռնությամբ, օրինակ, հաճոյանալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը, շտաբին եւ փորձեն շատ մարդ ապահովելու համար գնան եւ այդպիսի քայլերի դիմեն, բայց նախընտրական մեր կենտրոնական շտաբը դիմել է օրինապահ մարմիններին, որպեսզի ուսումնասիրեն այդ տեսագրությունը: Բնականաբար, բոլոր այն մարդիկ, որոնք հանցանք կամ զանցանք են գործել, պետք է պատժվեն:

-Պարոն Հակոբյան, օրերս նախարար Անահիտ Ավանեսյանը եւ իր տեղակալը մասնակցում էին քարոզարշավին. սրան Դուք ինչպե՞ս եք վերաբերվում: Նախարարը, հերիք չէ, մասնակցում է, դեռ մի բան էլ իր օգնականին է բերում քարոզարշավի:

-Անահիտ Ավանեսյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, մեր կուսակցությունով ենք մասնակցում քարոզարշավին, ես էլ պատգամավոր եմ, եւ ես էլ ինքս մասնակցում եմ քարոզարշավին: Ինչո՞ւ Ձեզ համար կասկածելի չէ իմ մասնակցելը, բայց Անահիտ Ավանեսյանի մասնակցելը կասկածելի է: Իր տեղակալն էլ է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, եւ մենք քարոզարշավն անցկացնում ենք մեր կուսակցությունով եւ պատասխանատվությունը կրում ենք մեր թիմով: Սա թիմային աշխատանք է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԹԵԺ Է

«Խնդրում եմ՝ տեղեկացնեք՝ վերջին 5 տարիների ընթացքում ծառայողական մեքենաների թվի փոփոխության ինչ միտում եք արձանագրել Հայաստանում»,- սեպտեմբերի 11-ին ԱԺ-ում ՏԿԵ նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին հարց ուղղեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

Պատգամավորը պարզաբանեց, որ ցանկանում է իմանալ, թե 2018 թվականի եւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քանի ծառայողական մեքենա է եղել Հայաստանում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ փոխնախարարը հայտնեց, որ այդ թվերն առկա են կառավարության համապատասխան որոշումներում:

«Կարելի է բացել եւ նայել: Հիմա այս ամբողջ օրենքի նախագծի իմաստը հետեւյալում է, որ լիազորող նորմ սահմանվի, որպեսզի կառավարությունը կարողանա միասնական որոշմամբ այդ չափորոշիչները սահմանել: Եթե հստակ, կոնկերտ թիվ եք ուզում, այս պահին չեմ կարող ասել, բայց եթե կառավարության համապատասխան որոշումը բացեք, կկարողանաք ծանոթանալ թվերին»,- պատասխանեց Արմեն Սիմոնյանը:

Արթուր Խաչատրյանն արձագանքեց. «Պարոն Սիմոնյան, թե ինչ կարող եմ անել, հավատացնում եմ Ձեզ, որ բավականին լավ գիտեմ»:

Փոխնախարարն ընդհատեց՝ ասելով. «Ես հուշում եմ ուղղակի»:

«Հուշելը պահե՛ք ձեզ. Դուք այստեղ ԱԺ-ում եք գտնվում, ոչ թե ԿԲՀ-ում: Պարոն Արշակյան, խնդրում եմ, զեկուցողին ասեք՝ մի քիչ հարգանք դրսեւորի»,- հայտարարեց Խաչատրյանը:

Նշենք նաեւ, որ նիստը վարող Հակոբ Արշակյանն էլ ասաց, որ իրեն չպետք է ասեն, թե ինքը ինչ անի:

«Ուրեմն Ձեր ներկայացուցիչն է, իրեն ասեք, որ ինձ չասի, թե ես ինչ անեմ: Ես խնդրում եմ, առաջինից երկրորդ ընթերցում այդ թվերը բացե՛ք եւ ներկայացրե՛ք»,- հայտարարեց ընդդիմադիր պատգամավորը:

Հակոբ Արշակյանն էլ կոչ արեց հարց ու պատասխանի ժամանակ կոռեկտություն ցուցաբերել եւ փոխադարձ հարգանքի մթնոլորտում անցկացնել քննարկումը:

Հավելենք, որ ԱԺ նիստում ««ԱԺ կանոնակարգ» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրինագծի քննարկման ժամանակ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը նշեց, որ հայ պատգամավորներին անձեռնմխելիությունից կզրկեն նաեւ ԱԺ արտահերթ նիստերում:

Մասնավորապես, գործող կանոնների համաձայն՝ քրեական գործ հարուցելու կամ պատգամավորին ազատությունից զրկելու վերաբերյալ միջնորդություն կարող է ներկայացվել միայն Ազգային ժողովի հերթական նիստում:

«Այժմ նման որոշումներ կարող են ընդունվել նաեւ արտահերթ նիստերի ընթացքում».-պարզաբանեց Հակոբյանը:

ՈՐՊԵՍ «ԳԼԽԱՔԱՆԱԿ» ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԵՆ ՏԱՆՈՒՄ

Նիկոլ Փաշինյանի կուսակցությունը մարդկանց կամավոր-պարտադիր սկզբունքով, որպես «գլխաքանակ», քարոզարշավի է տանում. մի երեւույթ, որ Նիկոլ Փաշինյանը քննադատում էր ընդդիմադիր եղած ժամանակ: Սեպտեմբերի 7-ին այդ խայտառակությունը բացահայտեց բլոգեր Արթուր Չախոյանը, երբ մտել էր Երեւանի Նոր Նորքի առաջին զանգվածում հավաքված քաղաքացիների միջեւ, ներկայանում էր ՔՊ շտաբից՝ հետաքրքրվելով, թե քանի հոգով որ կառույցից են ներկայացել հավաքին: Պարզվեց՝ մեծամասնությունը «բերովի» մարդիկ էին՝ տարբեր հաստատությունների, համայնքային այլ կառույցների աշխատակազմերի ուղղորդմամբ: Այս առիթով «Անկախ դիտորդ» դաշինքը ՀՀ գլխավոր դատախազին հանցագործության մասին երկու հաղորդում է ուղարկել, երկուսն էլ՝ պետական ու համայնքային կառույցների աշխատողներին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հանրահավաքներին բերելու պարտադրանքի մասին վկայող նյութերով: «Ականատես» դիտորդական առաքելությունն էլ հայտարարել է, որ իրենց դիտորդների կողմից նմանատիպ այլ դեպքերի պարբերաբար արձանագրումը վկայում են իշխող ուժի կողմից վարչական լծակների լայնածավալ եւ համակարգային չարաշահման մասին: «Այս գործելաոճն ամբողջովին խեղաթյուրում է ընտրական արդար եւ հավասար մրցակցային պայքարը, ինչպես նաեւ անթույլատրելիորեն խոչընդոտում ընտրողների ազատ կամքի իրացումը: Ավելին՝ արձանագրված դեպքը առերեւույթ կարող է պարունակել ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ կամ 236-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հատկանիշներ»,- հայտարարել է կազմակերպությունը: «Անկախ դիտորդ» դաշինքը պահանջում է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանից կատարել լայնածավալ օպերատիվ հետախուզական միջոցառումներ՝ եղելությունը ամբողջությամբ բացահայտելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնից հետաքրքրվեց, թե ինչ է արվել դատախազության կողմից ստացված դիմումի հետ: Պաշտոնապես հայտնեցին, որ «նյութերն ուղարկվել են ոստիկանություն՝ ստուգողական գործողություններ իրականացնելու համար»: Իհարկե, հասկանալի է, թե ինչ ավարտ կունենա այս գործը՝ հաշվի առնելով, թե ով է ՀՀ գլխավոր դատախազը կամ ոստիկանությունն ընդհանրապես: Այս իրավիճակում մի հարց է մնում չպարզաբանված. եթե ՔՊ-ի՝ նկարած պաչիկներով ջերմ հոլովակների բոլոր մարդիկ բերված են, այդ դեպքում որտե՞ղ են ՔՊ-ի ընտրողները: Գուցե չկա՞ն, եւ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանն էլ պետք է իր բաժին նկարչությամբ զբաղվի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽԱՌՆԱՇՓՈԹ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ՔՊ–ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում մի իսկական խառնաշփոթ իրավիճակ է ստեղծվել, դերերն ու դերակատարներն ամբողջությամբ խառնվել են: Ինչպես իշխանական մեր աղբյուրներն են փոխանցում, ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն այլեւս ակտիվ չէ խմբակցության հետ կապված կազմակերպչական հարցերում. նա միայն դե յուրե է համարվում խմբակցության ղեկավար: Իրականում խմբակցությունը կառավարում է քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որը 2017 թվականին բերման է ենթարկվել ոստիկանություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով: Գործուղումների հետ կապված հարցերն էլ հիմնականում Արթուր Հովհաննիսյանը քննարկում է Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ, եւ միասին են որոշում, թե որ պատգամավորն ուր մեկնի: Անգամ երբ Նիկոլ Փաշինյանի կողմից հրահանգներ են «իջեցվում» ՔՊ-ականներին, դա էլ Հովհաննիսյանի միջոցով է արվում: Կոնջորյանը մնացել է միայն քաղաքական հայտարարություններ անելու համար՝ որպես դե յուրե խմբակցության ղեկավար: Նրան ՔՊ-ում ամեն դեպքում չեն վստահում, քանի որ, նախ, դավաճանեց «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը եւ շտապեց ՔՊ ցուցակով պատգամավոր դառնալ Ալեն Սիմոնյանի միջնորդությամբ, ապա նաեւ դուրս եկավ Ալեն Սիմոնյանի դեմ՝ ներսում դավեր նյութելով նրա դեմ: Ահա այս պատճառով էլ ՔՊ-ում Կոնջորյանին համարում են անվստահելի, կասկածելի կերպար:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանի սեպտեմբերի 11-ի հայտարարությունից տեղեկանում է, որ Արթուր Իվանի Հարությունյանը ներկայացրել է հրաժարականի դիմում:

««Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, պատգամավորը գրավոր դիմումով հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա Ազգային ժողովի նախագահն այդ մասին հանդես է գալիս հայտարարությամբ, եթե հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում ու հրապարակում է Ազգային ժողովի նախագահը եւ ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Արձանագրության հրապարակման պահից հրաժարականը համարվում է ընդունված»,- նշել է Իշխանյանը:

ԱՐՑԱԽ

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին Արցախի Ազգային ժողովից տեղեկացնում են, որ Արցախի ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանը նամակներ է հղել Իրանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի խորհրդարանների խոսնակներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանում իրանահայության երկու պատգամավորներ Արա Շահվերդյանի եւ Ռոբերտ Բեգլարյանի միջնորդությամբ Արցախի Հանրապետության ԱԺ նախագահի նամակը փոխանցվելու է Իրանի խորհրդարանի նախագահին:

«Օրեր առաջ Արցախի ԱԺ նախագահը նամակներ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնության Պետդումայի, Ֆրանսիայի Հանրապետության Սենատի, ԱՄՆ Սենատի, ԱՄՆ կոնգրեսի, ինչպես նաեւ Եվրախորհրդարանի խոսնակներին:

«Ալիք» օրաթերթի փոխանցմամբ՝Իրանի օրենսդիր իշխանությունների կողմից սպասվող հնարավոր արձագանքներին ծանոթանալու նպատակով հեռախոսազրույց են ունեցել Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ Հյուսիսային իրանահայության պատգամավոր Արա Շահվերդյանի հետ եւ նրանից հետաքրքրվել, թե արդյոք Դավիթ Իշխանյանի կիրառած նոր գործելաձեւը կարող է ազդեցիկ գործիք դառնալ ադրբեջանական արգելափակման վերացման եւ Իրանի կողմից միջամտության տեսանկյունից:

Արա Շահվերդյանը նախ տեղեկացրել է, որ նամակից մի օրինակ ՀՀ-ում հանձնվել է Իրանի Իսլամական խորհրդարանում Սպահանի եւ Հարավային իրանահայության պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանին, եւ արդեն այստեղ երկուսով պատրաստվում են այն հանձնել Իսլամական խորհրդարանի խոսնակ Մուհամմադ Բաղեր Ղարիբաֆին:

Ապա պատգամավորն ընդգծել է, որ այսօրվա դրությամբ շատ կարեւոր է տարբեր գործիքակազմերի կիրառումը: Ըստ պատգամավորի՝ բոլոր քայլերն էլ կարող են ազդել Արցախի էթնիկ բնակչության շահերի պաշտպանության առումով:

«Չնայած տարբեր անձանց ու կառույցների կողմից հնչող դատապարտող կոչերին՝ Բաքուն շարունակում է արգելափակել Լաչինի միջանցքը՝ զրկելով Արցախին Հայաստանի հետ կապող միակ կենսական ճանապարհից: Ադրբեջանը անտեսում է ՄԱԿ-ի, Անվտանգության խորհրդի, Եվրախորհրդարանի, ՄԻԵԴ-ի եւ Հաագայի դատարանի ու այլ միջազգային կառույցների պահանջները՝ իրագործելով արցախահայության էթնիկ զտման, սադրանքի եւ ուժի սպառնալիքի քաղաքականությունը», - նշել է Շահվերդյանը:

Հարցմանը, թե ինչպիսի գործընթացներ է նախատեսում Իրանի Իսլամական Խորհրդարանը նման օրակարգային հարցերի առնչությամբ, Արա Շահվերդյանը նշել է, որ իրենք պատրաստվում են որպես միջնորդ հանդես գալ նամակի հանձնման ուղղությամբ, որը նշանակում է, որ ուղղակիորեն այն կստանա խորհրդարանի խոսնակը:

Իրանի Իսլամական խորհրդարանի պատգամավորը շեշտել է, որ, որպես իրանահայության զույգ պատգամավորներ, անպայման կշարունակեն հետեւողական լինել Արցախի էթնիկ բնակչության շահերի պաշտպանության հարցերի նկատմամբ՝ ընդգծելով, որ, որպես երկրի օրենսդիր իշխանության մեկ մասնիկ, բազմիցս դիմել են պետական անձանց՝ խնդրելով տարբեր քաղաքական ու դիվանագիտական միջոցներ կիրառել, ճնշումներ գործադրել ադրբեջանական սադրանքները զսպելու մեխանիզմներ կիրառելու եւ Արցախի էթնիկ բնակչության իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Հավելենք, որ Արա Շահվերդյանն ընդգծել է, որ հետամուտ են լինելու, որպեսզի Արցախի ԱԺ նախագահ Դ. Իշխանյանի հղած նամակ-պահանջը իսլամական խորհրդարանի խոսնակի կողմից հասցեական եւ համապատասխան արձագանք ստանա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՈՒՇՈՂ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեւանյան շենքերի վրա կտեղադրվեն հասցեները հուշող հատուկ ցուցանակներ: Առաջին փուլով ընտրվել է 2013-2023 թթ. ընթացքում ավագանու կողմից անվանակոչված 62 փողոց: Այս պահին 131 ցուցանակի տեղադրումն ընթացքի մեջ է:

ԱՐՏԱԿԱՐԳ ՌԵԺԻՄՈՎ

Երեւանի մետրոպոլիտենից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ սեպտեմբերի 12-15-ը մետրոպոլիտենը աշխատանքներն իրականացնելու է արտակարգ ռեժիմով:

«Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ՝ Երեւանի Թումանյանի անվան այգում (Թումոյի այգի) իրականացվելու է հայ եւ համաշխարհային օպերային ստեղծագործությունների գլուխգործոցների բացօթյա ցուցադրությունը՝ Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոնի արտիստների մասնակցությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ս.թ. սեպտեմբերի 12-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը ներառյալ Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտենն աշխատանքներն իրականացնելու է արտակարգ ռեժիմով:

Նշենք, որ մետրոպոլիտենի աշխատանքային գրաֆիկում կլինեն որոշակի ժամային փոփոխություններ:

Միայն ս.թ. սեպտեմբերի 12-ին,13-ին,14-ին եւ 15-ին մետրոպոլիտենի աշխատանքները կսկսվեն ժամը 07:00-ից եւ կավարտվեն ժամը 01:00-ին», - ասված է հաղորդագրության մեջ:

ԱՃՈՒՐԴՈՎ ՀԱՄԱՐՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանում առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշները կվաճառվեն միայն էլեկտրոնային աճուրդով: ««Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ ԱԺ-ում քննարկման ներկայացրեց ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանը:

Հրապարակային ծանուցումների համար կօգտագործվի Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջը: Աճուրդին մասնակցել ցանկացող անձը կայքում ստեղծված համակարգում պետք է ունենա մասնակցի անձնական էջ, աճուրդին մասնակցության նախավճար պետք է փոխանցի՝ երաշխավորելու իր մասնակցությունն աճուրդին:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանն էլ հարցի քննարկման շրջանակում նշեց՝ սովորաբար մարդիկ պատրաստ են գումարներ վճարել իրենց մեքենաների լավ համարների համար՝ հասարակության այլ մասնակիցների նկատմամբ առավելություն ստանալու համար: Նա խնդրեց, կոչ արեց ՆԳՆ-ին այս հարցին էլ ուշադրություն դարձնել, որ նոր տեսակի համարանիշներ ձեռք բերելը անհավասարության միջոց չդառնա:

Փոխնախարար Սարգսյանը վստահեցրեց՝ անկախ նրանից՝ համարանիշը կունենա զրոներ կամ կրկնվող թվեր, վարորդները վարչարարության առավելություն չեն ունենալու:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Սեպտեմբերի 9-ի գիշերը Երեւանի կենտրոնում դայթած գերթանկարժեք հրավառությունը, որ ահաբեկել էր Երեւանի բնակիչներին, անհետեւանք չի մնացել: Իսկ ո՞վ էր դրա կազմակերպիչն ու պատասխանատուն:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հրավառությունն իրականացրել է «Գոլդ ֆայեր» ՍՊԸ-ն, որի կազմակերպիչներին հենց այդ երեկոյան հրավիրել են ոստիկանություն եւ ենթարկել վարչական պատասխանատվության: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ընկերությանը տուգանել են ընդամենը 100 հազար ՀՀ դրամով: Իսկ ինչո՞ւ է միայն տուգանվել հրավառություն իրականացրած ընկերությունը, ինչո՞ւ իրավապահները սահմանափակվեցին միայն հրավառություն իրականացրած ընկերությանը 100.000 դրամ տուգանելով:

«Դվին» հյուրանոցի սեփականատեր Արտակ Թովմասյանը, որի սեփական տարածքում հնչեցին «պայթյունները», պատասխանատվության չենթարկվեց բնակիչներին ահաբեկելու համար:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 9-ին՝ երեկոյան ժամը 22:30-ի սահմաններում, Երեւան քաղաքում ապրող բնակիչները սարսափի մեջ էին: Բանն այն է, որ սահմանային իրավիճակով լարված Երեւանի կենտրոնում, մի կողմից, Coca Cola Fest-ն էր, մյուս կողմից՝ Dvin Music Hall-ի երկնքում պայթեց ամենաճոխ եւ թանկարժեք հրավառությունը:

Նշենք, որ դեռ հունիս ամսին ՔՊ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանը առաջարկել էր կանոնակարգել հրագործական նյութերի արտադրությունը, ներմուծումն ու առեւտրի իրականացման ոլորտը: Այսինքն՝ եթե հրավառություն է Հայաստանում, ուրեմն դա պետք է լինի պետական կամ համայնքային նշանակության տոն օրերին՝ պետության կամ համայնքի մասնակցությամբ կարեւոր միջոցառումների ժամանակ:

Սիսակ Գաբրիելյանը հայտարարել էր. «Հարսանիքներում այլեւս հրավառություն չի լինելու. մենք փաստացի այնպես ենք անում, որ մարդիկ չկարողանան գնել հրավառություն»:

Ստացվում է, որ ՔՊ-ական պատգամավորի առաջարկն ու հայտարարությունը ոչինչ է. հրավառությունները կային եւ կան նաեւ այսօր: ՔՊ-ն անկարող է իշխանավարել:

Նշենք նաեւ, որ, ըստ մամուլում հրապարակված լուրերի, «Դվին»-ում հարսանեկան արարողություն իրականացրել են ռուսաստանաբնակ հայեր՝ ծնունդով Ախալքալաքից եւ Մարտունուց: Ամուսնացել է ախալքալաքցի Էդգար Վահրադյանը: Երգել են «Հայաթ Փրոջեքթ»-ը, Արկադի Դումիկյանը, Անաստասիա Բրուխտին: Հյուրերի շարքում եղել է նաեւ երգիչ Ռազմիկ Ամյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԽՄԲԱԿԱՅԻՆ ԾԵԾ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ուշագրավ դեպք է տեղի ունեցել Էջմիածին քաղաքի համար 1 սուպերմարկետի հարակից տարածքում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վիճաբանություն է եղել նույն քաղաքի բնակիչների միջեւ, որի ընթացքում տղամարդիկ հարվածներ են հասցրել միմյանց, ինչի ընթացքում նրանցից մեկը՝ 2004 թվականին ծնված երիտասարդը, դանակով հարվածել է մյուսին, ինչի հետեւանքով վիճաբանողներից երկուսը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Բնակիչները ահազանգել են իրավապահներին, ու դեպքի վայր են շտապել շտապօգնության աշխատակիցները եւ երկու անձի տեղափոխել են Վաշարշապատի հիվանդանոց: Մեզ հայտնի դարձավ, որ դանակահարված տղամարդկանցից մեկի կյանքին վտանգ չի սպառնում, իսկ մյուսի վիճակը ծանր է: Իսկ ի՞նչն է եղել դանակահարության պատճառը: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝ վիճաբանողները ծանոթներ են եղել, կատակներ են արել միմյանց հասցեին, որոնցից մեկին կատակը դուր չի եկել, ինչել է հայհոյանք, ինչից հետո ծեծել ու դանակահարել են միմյանց:

ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Սերգո Մաշակարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային կազմի պահեստազորային, պարտավոր լինելով մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 02.02.2023 թվականի թիվ 122-Ն որոշմամբ հայտատարված՝ 2023 թվականի ապրիլի 11- ից մինչեւ մայիսի 5-ն անցկացվող 25-օրյա վարժական հավաքին, Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման Սպիտակի բաժանմունքի կողմից 04.03.2023 թվականին պատշաճ ծանուցված լինելով տարածքային ստորաբաժանում ներկայանալու մասին, վարժական հավաքներին մասնակցելու համար չի ներկայացել Լոռու մարզի տարածքային ստորաբաժանում եւ չի մեկնել վարժական հավաքի:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՐԱՎԻՐՎԵՑ ԱԱԾ

Սեպտեմբերի 11-ին Ազգային-ժողովրդավարական բեւեռի խորհրդի անդամ Ժիրայր Սէֆիլյանը՝ որպես վկա, հարցաքննության է ծանուցվել ԱԱԾ քննչական դեպարտամենտ:

Ազգային-Ժողովրդավարական բեւեռի մամուլի ծառայությունից հայտնում են՝ հարցաքննության առիթը եղել է Ժ. Սէֆիլյանի այն հայտարարությունը, որ առկա են լուրեր՝ Հայաստանում վագներականների գտնվելու եւ ազգային անվտանգության համար սպառնալիք լինելու մասին:

ԳԱՂՏՆԱԼՍՈՒՄ

ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ ԳՈՐԾԸ՝ 5 ՏԱՐԻ ԱՆՑ

Ինչպես հայտնի է, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում վերսկսվել է Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով քննությունը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախկինում քննիչները չբացահայտված քրեական գործով քննությունը կասեցնում էին. հիմա ամեն ինչ այլ է:



ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը հստակ սահմանում է, որ կամ քրեական վարույթը կարճվում է, կամ որեւէ մեկի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում եւ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվում: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը այլեւս չբացահայտված քրեական վարույթների կասեցման իրավական ընթացակարգ չի նախատեսում: Եթե նախկինում քննիչները քրեական գործերը կասեցնում էին ու գցում տարիներով իրենց «սեյֆերում», ապա հիմա պետք է քննությունը շարունակեն:

Հիշեցնենք, որ 2018-ի սեպտեմբերի 11-ին համացանցում էր հայտնվել ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսազրույցի գաղտնալսման գործը, որը հետագայում կարճվեց՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը կասեցված էր: Այժմ կվերսկսվի այս մասով քննությունը: Թե ինչ ավարտ կունենա, թերեւս դժվար չէ կանխատեսել:

Նկատենք, որ սկանդալային գաղտնալսման ձայնագրությունից անցել է 5 տարի. ի՞նչ ունենք ԱԱԾ նախկին տնօրենի, ՀՔԾ պետի եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գաղտնալսման դեպքով ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական գործով:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 5 տարվա ընթացքում նշանակվել են բազմաթիվ փորձաքննություններ, իրականացվել են օպերատիվ-հետախուզական աշխատանքներ, միջազգային կառույցներին դիմումներ են ուղարկվել, սակայն ՀՀ քննչական կոմիտեն այդպես էլ 5 տարվա մեջ չբացահայտեց գործը. այն Քննչական կոմիտեում դասվեց չբացահայտված գործերի շարքին: Քրեական գործով 5 տարի անց չկա ո՛չ մեղադրյալ, ո՛չ կասկածյալ եւ ո՛չ էլ հետախուզվող: Ասել է թե՝ քննիչները անգամ չկարողացան բացահայտել իրենց ղեկավարին գաղտնալսած անձին, ուստի այստեղ կասկածի տակ է պետք դնել ոչ միայն ՀՀ քննիչների ունակությունը, այլեւ կասկածներ հայտնել հայրենի իրավապահ համակարգի կարողության մասին:

Ք.ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 8-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 123 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՅԱԾՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՈՎ ԶԻՆՂԵԿՆԵՐ

Նոր ուսումնական տարում հանրակրթական դպրոցների զինղեկներին տհաճ անակնկալ էր սպասում: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդեասյանը սեպտեմբերի 4-ին թիվ 112 հրամանով փոփոխություններ եւ լրացումներ է կատարել ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 79-Ն հրամանում: Ըստ նոր հրամանի՝ այն հիմնական դպրոցները, որոնք չունեն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան սովորող նվազագույնը 6 դասարան, այն միջնակարգ դպրոցները, որոնք այդ առարկան սովորող նվազագույնը 8 դասարան չունեն, այդ դպրոցների զինղեկների աշխատավարձը կիսով չափ նվազել է: Տավուշի գյուղական դպրոցների զինղեկները հայտնեցին, որ նախկինում իրենց աշխատավարձը գոյանում էր « Նախնական զինվորական պատրաստություն» առարկան դասավանդելու համար ուսուցչի մեկ դրույքաչափի՝ 116 հազար դրամի եւ «Քաղաքաշտպանություն» առարկայի համար նվազագույն աշխատավարձի կես չափի՝37 500 դրամի գումարումից: Այս ուսումնական տարում ՆԶՊ առարկայի համար Տավուշի մարզի գյուղական դպրոցների ուսուցիչները կվճարվեն կես դրույքաչափով՝ 58 հազար դրամով, իսկ «Քաղաքացիական պաշտպանություն» առարկայի համար՝նվազագույն աշխատավարձի 30 տոկոսի՝ 22 հազար 500 դրամի չափով: Երբ զինղեկի աշխատավարձից կհանեն հարկերը,ապա իրական աշխատավարձը կստացվի մոտ 65 հազար դրամ, որը 10 հազար դրամով քիչ է, քան դպրոցների հավաքարարների ռոճիկը: Տավուշի մարզի զինղեկներն այդ կապակցությամբ հիշել են 2018թ.-ին կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանի՝ Իջեւանում արած հայտարարությունն այն մասին,որ հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» եւ « Հայոց եկեղեցու պատմություն» առարկաների դասավանդումը կդադարեցվի: Տավուշի դպրոցների շատ զինղեկներ աշխատավարձի կիսով չափ կրճատումից հետո մտադիր են դպրոցից դուրս գալ, որպեսզի այլ աշխատանքով ընտանիքի ապրուստը հոգան: Սահմանամերձ գյուղերի դպրոցների զինղեկները ՄՕԲ-ի դասակի հրամանատարներ են, նրանք զինվորական վարժական հավաքների ժամանակ մոբիլիզացվում են, սահմանագոտում դասակներ ղեկավարում. նրանց՝ աշխատանքից դուրս գալը բացասաբար է ազդելու Տավուշի սահմանագոտու պաշտպանության վրա:

Համայնքապետարանը գումար չունի՞

«Ժողովուրդ» օրաթերթը Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին տեղեկատվական հարցում է ուղարկել՝հետաքրքրվելով, թե զբոսաշրջային Դիլիջան քաղաքի կենտրոնում Աղստեւի հունը երբ են մաքրելու այնտեղ աճած ծառերից, թփերից, այլ բաներից: Համայնքապետը պատասխանել է. «Բյուջեի սղության պատճառով Աղստեւ գետի հունի մաքրման աշխատանքները ներառված չեն 2023թ. տեղական բյուջեի ծախսերում, համապատասխան միջոցների առկայության դեպքում այն կներառվի 2024թ. տեղական բյուջեում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ սեպտեմբերի 11-ին մեկնարկած ԱԺ քառօրյա նիստերի օրակարգում ընդգրկված է ««Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի նպատակն է նպաստել հանրապետությունում ներառական կրթության բարելավմանը:

Քննարկվող նախագծով, մասնավորապես, առաջարկվում է մանկավարժական աշխատողների պարտականություններում ամրագրել պարտավորություն՝ուղղված կրթական գործընթացում բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը խթանելուն, այդ թվում՝ արտադասարանական եւ արտադպրոցական միջոցառումներում, եւ խտրականությունից զերծ միջավայր ապահովելուն: Բացի այդ, կսահմանվի դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ ստեղծելու իրավունքը՝ երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների եւ ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության համար:

Նշենք նաեւ, որ առաջարկվում է նաեւ ծնողի պարտականություններում ամրագրել մասնակցությունը երեխայի անհատական ուսուցման ծրագրի իրականացմանը, աջակցությունը դասապատրաստմանը եւ այլն:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացնում է, որ, որպես հարակից զեկուցող, հանդես է եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ Կառավարությանը ներկայացրած մի շարք առաջարկություններ ներառված են նախագծում: Կարեւորելով օրենքի ընդունումը՝նախարարը փաստել է, որ այն առավելապես արժեքային շեշտադրումներ է պարունակում:

«Նախագծով ընդգծվում է փոփոխությունները կյանքում կիրառելու կարեւորությունը: Ներառական կրթությունը եւ ներառական միջավայրն առաջին հերթին կրթության համակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ ուսուցիչների, ծնողների, աշակերտների եւ բոլոր մարդկանց մոտեցումների եւ վերաբերմունքի մասին է: Այդ իմաստով ծնողների փոխօգնության խմբերի, նրանց առավել ակտիվ ներգրավվածությունն անհատական ուսուցման պլանների մշակման եւ իրականացման գործում, ինչպես նաեւ ուսուցիչների կողմից ոչ խտրական վերաբերմունքի եւ արժեքային շեշտադրումների ամրապնդումը կարող է էական ազդակ լինել այս ուղղությամբ աշխատանքների ինտենսիվ իրականացման համար: Կարծում եմ՝ սա նաեւ կամրապնդի այս ուղղությամբ ներկայում վարվող պետական քաղաքականությունը»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ընդգծելով, որ սեպտեմբերից գործում է ներառականության ֆինանսավորման նոր մոդելը, որը միտված է բարելավելու իրավիճակը:

Ըստ ԿԳՄՍ նախարարի՝օրենքի նախագիծն ամբողջությամբ համահունչ է Կառավարության՝ ոլորտում իրականացրած քաղաքականությանը եւ բխում է կրթության՝մինչեւ 2030 թ. զարգացման պետական ռազմավարությունից:

Հավելենք, որ նախագծի հեղինակը ԱԺ պատգամավոր Զարուհի Բաթոյանն է:

Գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունը ներկայացրել է ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Թագուհի Ղազարյանը:

ԿԱՐԵՎՈՐ

ԱՆՆԱԽԱԴԵՊ ⇨ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ

Հայաստանում բենզինը եւ հեղուկ գազը շարունակում են ինտենսիվ կերպով թանկանալ. նախկին՝ 350 դրամով մեկ լիտր բենզին գտնելն այսօր արդեն երազանք է: Մասնավորապես՝ «Ռեգուլյար» տեսակի բենզինները դարձել է 510, «պրեմիումը»՝ 540 դրամ, դե իսկ հեղուկ գազը նախկին 100 դրամի փոխարեն այսօր արժե 160 դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Մրցակցության պաշտպանության հանձնաժողով՝ պարզելու, թե ինչ հիմնավորմամբ են բարձրանում արժեքները, եւ թե հանձնաժողովը ինչ քայլեր է անում:

ՄՊՀ-ի մամուլի քարտուղար Անի Սմբատյանը մեզ ուղղորդեց դեպի ֆեյսբուքյան էջի իրենց հրապարակումը, որը կատարվել էր դեռեւս օգոստոսի 18-ին:

Ըստ հրապարակման՝ներկայումս ՄՊՀ-ն ուսումնասիրություն է իրականացնում բենզինի շուկայում գների բարձրացման հիմնավորվածությունը պարզելու նպատակով:

«Նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միջազգային շուկաներում եւս տեղի են ունեցել գների բարձրացումներ: Եթե ուսումնասիրության ընթացքում բացահայտվեն գնի չհիմնավորված բարձրացման երեւույթներ, ապա հանձնաժողովի կողմից կհարուցվեն համապատասխան վարչական վարույթներ»:

Անի Սմբատյանը հավելել է, որ հանձնաժողովն ամենօրյա մոնիտորինգ է իրականացնում մի շարք սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների շուկաներում: Ապրանքների գների 5 տոկոսից ավել փոփոխության դեպքում, եթե դրանք համահունչ չեն արտաքին գործոնների փոփոխություններին, նախնական ուսումնասիրություն է սկսվում:

Փաստացի ՄՊՀ-ն պարբերաբար կատարում է «ուսումնասիրություններ», որին հաջորդում են ոչ թե գնի նվազումներ կամ բացատրություններ, թե ինչու են բարձրանում գները, այլ թանկացումներ՝ լռության մթնոլորտում:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԴԱՍԵՐ՝ ԱՌԱՆՑ ԳՐՔԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դպրոցներում աշակերտները դեռ գրքեր չունեն: Ծնողներն ահազանգում են, որ ո՛չ ուսուցիչներն են պատրաստ այս փոփոխությանը, ո՛չ աշակերտները: Հայաստանի գյուղերից մեկի դպրոցի 2-րդ դասարանում, քանի որ ծրագիր կա, սակայն դասագիրք չկա, ուսուցիչը թղթեր է բաժանում, երեխաներին հանձնարարում նկարել իրենց ընտանիքը, ապա փորձում են, ըստ դրա, նոր բառեր սովորել: Մեկ այլ դեպքում էլ 5-րդ դասարանցիներն ուսանողների պես լեկցիաներ են գրում, թղթերի վրա համառոտագրում դասերը հաջորդ ժամերի համար:

Այսպիսով, ամեն ինչ գնում է դեպի այն, որ այս նոր եւ փոփոխված ծրագրերի պատճառով կրթության որակն ու մակարդակը կտրուկ անկում են ապրում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 38 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 61-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԱՈՄ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ գրել էր, որ Գայի անվան 129 դպրոցում քաոս է տիրում, աշակերտները հայհոյում են ուսուցիչներին: Ահազանգի հետքերով գնացել էինք դպրոց՝ հանդիպելու դպրոցի տնօրենի հետ: Վերջինս հերքեց այդ տեղեկությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մեր անդրադարձից հետո դպրոցում թիրախավորել են ներառական կրթությամբ սովորող Գ. Դ.-ին:

Բարձր դասարանի աշակերտները թիրախավորել են աշակերտներին եւ ուսուցիչներին ավելի անկարգ պահվածքով: Մեր հրապարակման հաջորդ օրվանից 9-րդ դասարանցիները ավելի նյարդային են դարձել: Ներառական կրթությամբ սովորող այս երեխայի նման շահագործումը առաջին դեպքը չէ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՈՉ ՈՔ ՉՀԱՆԴԻՊԵՑ

Վրացական համարանիշներով ավտոմեքենաներ ներմուծող վարորդները, որոնք բողոքում են նոր նախագծից, ըստ որի՝ վրացական պետհամարանիշներով մեքենաներով Հայաստան մուտքի ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ երկքաղաքացիները պետք է որպես գրավ վճարեն մաքսազերծման ամբողջ գումարը, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեցին, որ ՊԵԿ-ից առայժմ որեւէ մեկը չի հանդիպել:

Նշենք, որ նրանք օգոստոսի 28-ին բողոքի ակցիա էին իրականացնում ՊԵԿ-ի դիմաց՝ պահանջելով չեղարկել քննարկման փուլում գտնվող օրենքի ընդունումը:

Ավելի վաղ մեզ հետ զրույցում ակցիայի մասնակիցներից մեկը նշել էր, որ նոր նախագծով մաքսային գրավի ամբողջ գումարը պետք է միանգամից թողնվի դեպոզիտ, որը դուրս գալուց հետ է վերադարձվելու:

Նշենք, որ այս թեմայի առնչությամբ երեկ Ազգային ժողովի նիստում ՊԵԿ փոխնախագահ Արտյոմ Սմբատյանն ասել էր, որ կարգավորումը չի ենթադրելու, որ վրացական համարանիշներով մեքենաները պետք է պարտադիր մաքսազերծվեն. «Հարցը վերաբերում է այն թեթեւ մարդատար ավտոմեքենաներին, որոնք ժամանակավոր՝ մեկ տարով, ներմուծվում են Հայաստան: Ժամանակավոր ներմուծման պայման է հանդիսանում նաեւ նախապես ապահովում ներկայացնելը: Քանի որ մեկ տարին անցնելուց հետո այդ մեքենաները շարունակում են մնալ Հայաստանում, կառավարությունում քննարկվում է հարցի լուծման մի շարք տարբերակներ: Դա ոչ թե վերաբերելու է այն մեքենաներին, որոնք ներմուծվել են եւ պետք է պարտադիր մաքսազերծվեն, այլ ՊԵԿ-ի առաջարկն է այդ ապահովագրական ծածկույթը որպես ապահովում ներկայացնելու փոխարեն, կանխիկ գումարով դեպոզիտ ներկայացնել: Սա է եղել կարգավորումը, հարցը քննարկման փուլում է»:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԽԵՄԱ

Խարդախությունը՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը: Մեր օրերում, երբ ֆինանսական գործարքների մեծ մասը հնարավոր է կատարել առցանց եղանակով, հանցավոր հակումներ ունեցող անձինք ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու նպատակով մշածում են արժանահավատ մեխանիզմներ՝ օգտագործելով համացանցը:

ՆԳՆ ոստիկանության տնտեսական եւ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում է, որ վերջին շրջանում, Արցախի պաշարման հետ կապված, ավելացել են համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հանցագործության դեպքերը: Մասնավորապես, սոցիալական ցանցերում Արցախի բնակիչներին հարմար գներով առաջարկում են ապրանքներ եւ խոստանում այն կարճ ժամանակահատվածում հասցնել Ստեփանակերտ:

Խարդախության եղանակով գումարը հափշտակելուց հետո արցախցի օգտատերերը հայտնվում են սեւ ցուցակում: Միայն սեպտեմբեր ամսվա ընթացքում այսօրինակ 2 հաղորդում է ստացվել: Խաբեությամբ շահույթ ստանալ ակնկալողները սոցցանցում ստեղծում են տարբեր անվանումներով կեղծ օգտահաշիվներ, որոնցում տեղադրում են գայթակղիչ հայտարարություններ:

Սեպտեմբերի 1-ին տնտեսական եւ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի վարչություն է մուտքագրվել Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Ա.Բ.-ի դիմումն այն մասին, որ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով կապ է հաստատել «Hunanyan Gayane» անվամբ գրանցված օգտատիրոջ հետ, որը նամակագրության ընթացքում ձեռք է բերել էլեկտրական սկուտերի գնման պայմանավորվածություն, որից հետո «Hunanyan Gayane» անվամբ գրանցված օգտատերը պահանջել է տերմինալի միջոցով «IDBank» ՓԲ ընկերության 43182900100**** բանկային քարտին փոխանցել ընդհանուր 156.000 ՀՀ դրամ էլեկտրական սկուտերի ձեռք բերման նպատակով:

Նույն օրը Ա. Բ.-ն տերմինալի միջոցով բանկային քարտին 156000 ՀՀ դրամ է փոխանցել, որը ստանալուց հետո հափշտակվել է անհայտ անձի կողմից, ինչի արդյունքում Արցախի բնակչին պատճառվել է գույքային վնաս:

Սեպտեմբերի 5-ին վարչությունը ստացել է մեկ այլ դիմում Մարտակերտի շրջանի բնակիչ Հ.Հ.-ից: Օգոստոսի 31-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով վերջինս կապ է հաստատել «Arustamyan Andrey» անվամբ գրանցված օգտատիրոջ հետ, որը «Messenger» հավելվածի միջոցով նամակագրության եւ զանգերի ընթացքում ձեռք է բերել բենզինի, ծխախոտի եւ ձեթի գնման պայմանավորվածություն, որից հետո վերջինս պահանջել է տերմինալի միջոցով 43182900922**** բանկային քարտին փոխանցել ընդհանուր 200.000 ՀՀ դրամ գումար:

Պայմանավորված ապրանքը ձեռք բերելու նպատակով սեպտեմբերի 3-ին Հ?Հ.-ն տերմինալի միջոցով նշված բանակային քարտին ընդհանուր 200.000 ՀՀ դրամ գումար է փոխանցել, որը ստանալուց հետո հափշտակվել է ոմն Անդրեյ անունով ներկայացած անձի կողմից, ինչի արդյունքում Հ.Հ.-ին պատճառվել է զգալի չափերի հասնող գույքային վնաս:

Նշենք, որ ոստիկանության տնտեսական եւ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը կոչ է անում Արցախի քաղաքացիներին ցուցաբերել զգոնություն, զերծ մնալ նմանատիպ գործարքներից եւ չընկնել ծուղակը, իսկ տուժելու դեպքում դիմել ոստիկանություն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՆ «Դիլիջանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի «ԹԳՀԳ» առարկայի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի (դրանց առկայության դեպքում) պատճենները,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 26.09.2023թ. ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 02.10.2023թ. ժամը 12:30-ին Դիլիջանի ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 61:

Տեղեկությունների համար զանգահարել (0268) 2-74-31, (099) 09-01-53 հեռախոսահամարներով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ՝ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Արտաշատի մարզադաշտում տեղի է ունեցել Եվրոպայի ռեկորդակիր, ՀՀ աթլետիկայի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Էմմիյանի անվան գավաթի միջազգային 15-րդ մրցաշարը:

Մրցաշարին ներկա էին նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանը, Էմմիյանի անձնական մարզիչ, Հայաստանի վաստակավոր մարզիչ Մկրտիչ Կարապետյանը, բռնցքամարտիկ Վիկ Դարչինյանը եւ այլք:

«Ռոբերտ Էմմիյանի գավաթ» մրցաշարին այս տարի մասնակցում էին 11 հեռացատկորդ՝ Հայաստանից, Բուլղարիայից, Հունաստանից, Ղազախստանից, Ֆրանսիայից եւ Ուզբեկստանից:

Նշենք, որ 8.07 մետր արդյունքով հաղթողի կոչմանն արժանացավ Ուզբեկստանի ներկայացուցիչ Անվար Անվարովը: 2-րդ մրցանակակիր դարձավ ֆրանսիացի Յանն Դանիել Յանն Տանտելին (7.56 մ): Լավագույն եռյակը 7.48 մետր արդյունքով եզրափակեց հույն Անտոնիոս Ստիլիանիդիսը:

Հայ հեռացատկորդներից երեքն են հայտնվել տասնյակում՝

Հրաչյա Մինասյան - 6-րդ տեղ (6.93 մ),

Գոռ Հովակիմյան - 7-րդ տեղ (6.85 մ),

Արամայիս Սարգսյան - 9-րդ տեղ (6.66 մ):

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը նշեց, որ բարձր մակարդակով կազմակերպված մրցաշար էր հիմնովին վերակառուցված մարզադաշտում: Ստադիոնն աչք է շոյում, եւ այս պայմաններում մրցաշարի որակն էլ, բնականաբար, դրանից շահում է: Ցավոք, արդյունքները այնքան էլ բարձր չէին:

«Վնասվածքի պատճառով մրցաշարին չէր մասնակցում մեր առաջատար հեռացատկորդ Գոռ Բեգլարյանը: Սա մեզ համար ավանդական եւ ուժեղ մարզաձեւ է, համոզված եմ՝ առաջիկայում անպայման կունենանք մարզիկներ, որոնք բարձր կպահեն Հայաստանի պատիվը»,- նշեց Գիլոյանը:

Հավելենք, որ միջոցառման շրջանակում Եվրոպայի, ԽՍՀՄ-ի ու հանրապետության բազմակի չեմպիոն, Բարի կամքի խաղերի հաղթող, Եվրոպայի ռեկորդակիր Ռոբերտ Էմմիյանը խորհրդանշական գավաթներ հանձնեց ՀՀ ԿԳՄՍ նախարարին, նախարարի տեղակալին, Արտաշատի քաղաքապետ Կառլեն Մկրտչյանին, նաեւ իր անձնական մարզչին:

Ռոբերտ Էմմիյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին, ապա ընդգծեց՝ միջազգային չափանիշներին համապատասխան մարզադաշտն ու աթլետիկական վազքուղին հնարավորություն են տալու կազմակերպելու բազմաթիվ միջազգային մրցումներ: Անվանի մարզիկի գնահատմամբ՝նմանօրինակ պայմաններ ունենալը երազանք էր:

Նշենք նաեւ, որ «Ռոբերտ Էմմիյանի գավաթ» մրցաշարի բացման արարողությունից առաջ ՀՀ աթլետիկայի ֆեդերացիայի նախագահը պարգեւատրել է նույն օրը՝ ավելի վաղ կայացած Գյումրու բաց առաջնության հաղթողներին եւ մրցանակակիրներին:

ԿԳՄՍ նախարարը նաեւ շրջայց կատարեց Արտաշատի մարզադաշտում եւ ծանոթացավ արդեն կատարված եւ դեռ ընթացքի մեջ գտնվող վերանորոգման աշխատանքներին:

ՍՊՈՐՏ

ԾԱՆՐՈՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք էր Ռիյադում անցկացվող ծանրամարտի աշխարհի առաջնությունում սեպտեմբերի 11-ին Հայաստանը ունեցավ 2 ներկայացուցիչ: Մրցահարթակ դուրս եկան Եվրոպայի չեմպիոններ Ռաֆիկ Հարությունյանը (81 կգ) եւ Անդրանիկ Կարապետյանը (89 կգ):

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 4-17-ը Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք էր Ռիյադում անցկացվող ծանրամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանը մասնակցում է 14 ծանրորդով:

Փաշիկ Ալավերդյանի գլխավորած տղամարդկանց հավաքականի կազմում մրցահարթակ դուրս կգան նաեւ Դավիթ Հովհաննիսյանն ու Հակոբ Մկրտչյանը (96 կգ), Գարիկ Կարապետյանը եւ Սամվել Գասպարյանը (102 կգ), Վարազդատ Լալայանը եւ Սիմոն Մարտիրոսյանը (109+ կգ):

Արտաշես Ներսիսյանի գլխավորած կանանց հավաքականի կազմում հանդես կգան նաեւ Լիանա Գյուրջյանը (81 կգ), Տաթեւ Հակոբյանը եւ Հռիփսիմե Խուրշուդյանը (87 կգ):

Հայաստանի հավաքականի առաջին մեդալը նվաճել է 67 կգ քաշային Գոռ Սահակյանը, որ երկամարտի 312 կգ արդյունքով դարձավ բրոնզե մեդալակիր (142 +170):

Ո՞Վ ԿԼԻՆԻ ՄԱՐԶԻՉԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գերմանիայի ֆուտբոլային միությունը (DFB) ազգային թիմի գլխավոր մարզիչի պաշտոնում դիտարկում է Մյունխենի «Բավարիայի» նախկին գլխավոր մարզիչ, 36-ամյա գերմանացի Յուլիան Նագելսմանի թեկնածությունը. հաղորդում է գերմանական Bild-ը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 9-ին Ճապոնիայի հավաքականի հետ ընկերական խաղում կրած 1:4 հաշվով պարտությունից հետո DFB-ն գլխավոր մարզիչի պաշտոնից հեռացրել էր գերմանացի Հանս-Դիտեր Ֆլիկին: Նախորդ 6 խաղերում Բունդեսթիմը 4 պարտություն է կրել, 1 խաղ ավարտել ոչ-ոքի, տարել 1 հաղթանակ:

Նշենք նաեւ, որ սեպտեմբերի 12-ին աշխարհի փոխչեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հետ ընկերական խաղում Գերմանիայի հավաքականը կղեկավարի Բունդեսթիմի մարզական տնօրեն, 63-ամյա գերմանացի Ռուդի Ֆյոլերը, որը ազգային թիմը գլխավորել է 2000-2004 թվականներին՝ դառնալով 2022թ. աշխարհի առաջնության փոխչեմպիոն:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԻՎԵՏԱՅԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Օրեր առաջ Իվետա Մուկուչյանը հանրությանը ներկայացրեց «Սեր կա երկնքում Երեւանի» երգն ու տեսահոլովակը:

Ավելի ուշ երգչուհու ինստագրամյան էջի «Սթորի» բաժինը սկսվեց ողողվել հոլովակներով, որոնք ուղեկցվում էին նոր երգով: Ավելին՝ երգչուհին խոստացավ բոլոր նրանց, որոնք իր երգի տակ հոլովակ կնկարեն, անպայման դիտել եւ պատահականության սկզբունքով ընտրել մեկին եւ երգել նրա որեւէ միջոցառմանը՝ հարսանիք, նշանադրություն եւ այլն: Հրապարակումով հանդես եկան շատերը՝ ինչպես հայտնիները, այնպես էլ սովորական մարդիկ, քաղաքացիները, սակայն ուշագրավներից մեկը ամերիկաբնակ երգչուհի Արմինկայի հրապարակումն էր: «Երեւան եմ ուզում»,- նկարին կից գրել է Արմինկան՝նշելով Իվետա Մուկուչյանին եւ նրա երգը: Վերջինս էլ կիսվել է իր էջում՝գրելով՝«Երեւանը կարոտում է քեզ, Արմինկա ջան»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅՏՆԻ Է ՀԱՂԹՈՂԸ

Վենետիկի 80-րդ կինոփառատոնի «Ոսկե առյուծին» արժանացել է ռեժիսոր Յորգոս Լանտիմոսի «Աղքատ-դժբախտները» ֆիլմը. հայտնում է РИА Новости-ն: Ֆանտաստիկ մելոդրաման ի սկզբանե եղել է մրցութային ծրագրի ֆավորիտներից մեկը. ֆիլմում գլխավոր դերակատարներն են եղել Էմմա Սթոունը եւ Ուիլեմ Դեֆոն:

«Այս ֆիլմը պատմում է մի հրաշք արարածի մասին, եւ այն չէր լինի առանց Էմմա Սթոունի՝ մեկ այլ հրաշք արարածի: Այս ֆիլմն իրենն է, առանց նրա դա չէր լինի»,- մրցանակը ստանալիս ասել է Լանտիմոսը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Սթոունը մարմնավորել է կնոջ դերը, ում մահից հետո կյանքի է վերադարձնում գիտնականը, որին մարմնավորում է Դեֆոն: Դրա համար նա փոխպատվաստում է իր դեռեւս չծնված երեխայի ուղեղը:

Ֆիլմի ռեժիսոր Յորգոս Լանտիմոսը չորս անգամ առաջադրվել է «Օսկար» մրցանակի: Նա նկարահանել է այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «The Lobster», «The Killing of a Sacred Deer», «The Favourite»:

Լավագույն ռեժիսորի մրցանակն այս տարի ստացավ իտալացի Մատեո Գարոնեն «Կապիտան» ֆիլմի համար: Սա աֆրիկացի միգրանտների պատմությունն է դեպի Եվրոպա: Ֆիլմի գլխավոր դերերից մեկի կատարողը՝սենեգալցի Սաիդու Սարը, որպես երիտասարդ դերասան ստացել է Մարչելո Մաստրոյանիի մրցանակը:

Հավելենք, որ կինոփառատոնի ժյուրիի գլխավոր մրցանակին արժանացել է ռեժիսոր Ռյուսուկե Համագուչիի «Չարը գոյություն չունի» ճապոնական ֆիլմը: «Վոլպիի գավաթը» որպես լավագույն դերասանուհի ստացավ Կեյլի Սփենին, որը խաղացել է Էլվիս Փրեսլիի կնոջ մասին պատմող «Պրիսցիլա» ֆիլմում: Լավագույն դերասան անվանակարգում մրցանակի դափնեկիր է դարձել Պիտեր Սարսգարդը՝ Միշել Ֆրանկոյի «Հիշողություն» ֆիլմում կատարած աշխատանքի համար:

● *Սեպտեմբերի 13-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

ՀԱՐՑ. Արդյոք ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու դարագայում հնարավո՞ր է խուսափել պարտադիր զինվորական ծառայությունից:

Արտակ Մանուչարյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Զինվորական հաշվառումից հանվում են օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձինք:

Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման, ինչպես նաեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո բոլոր զորակոչիկները պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են: Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար: Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝յոթնօրյա ժամկետում:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված եւ ազատազրկման ձեւով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Զինապարտներն իրենց առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի, կրթության, աշխատավայրի եւ պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքում կարող եմ դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին եւ ինչքա՞ն գումար պետք է վճարեմ դրա համար:

Անուշ Ստեփանյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Դուք ֆիզիկական անձ եք, այդ թվում՝ երաշխավոր կամ գրավատու, կամ Հաշտարարին դիմելու պահին հանդիսանում եք միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր եւ օգտվել եք ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից կամ դիմել եք դրանցից օգտվելու համար եւ արդյունքում ունեք բողոք-պահանջ ֆինանսական կազմակերպության նկատմամբ, ապա կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հավայան մեծ կղզում սեպտեմբերի 10-ին ժայթքել է Կիլաուեա հրաբուխը, որից ժայթքող լավան առայժմ հոսում է խառնարանի մերձակա տարածքում: Սա այս տարվա ընթացքում Կիլաուեա հրաբխի արդեն երրորդ ժայթքումն է:

Հրաբխի ժայթքմանը նախորդել է ուժեղ սեյսմիկ ակտիվության շրջան: Կիլաուեայի շուրջ թռիչքների վտանգավորության մակարդակը նարնջագույնից բարձրացվել է կարմիրի:

Կիլաուեան աշխարհի ամենաակտիվ հրաբուխներից մեկն է: 2019թ.-ին հրաբխի ժայթքման պատճառով հարյուրավոր տներ եւ ձեռնարկություններ էին ավերվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Տարածք	Ջերմաստիճան
Շիրակ	+ 5 + 9 +15 + 18
Կոտայքի լեռներ	+ 5 + 8 +15 + 17
Կոտայքի նախալեռներ	+10 + 14 +18 + 22
Գեղարքունիք	+ 5 + 8 +15 + 18
Լոռի	+5 + 10 +14 + 17
Տավուշ	+ 8 + 12 +16 + 20
Արագածոտնի լեռներ	+3 + 6 +15 + 18
Արագածոտնի նախալեռներ	+10 + 14 + 18 + 23

Տարածք	Ջերմաստիճան
Արարատ	+13 + 16 +20 + 23
Արմավիր	+11 + 15 +30 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 12 +16 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+11 + 15 +20 + 23
Սյունիքի հովիտներ	+12 + 15 +18 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 9 +13 + 16
ԼՂՀ	+11 + 15 +18 + 22
Երեւան	+17 + 19 +22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.9.2023**
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*